

**ԽՈՐՀՐԳՐԱՆ**

**ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՅԱՑԱՆ.  
«ՎՐԱՅԱՎԱՆ ԵՐԱԶԱՆՔ»՝ 48,67 ՏՈԿՈՍ,  
«ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ»՝ 27,11 ՏՈԿՈՍ,  
«ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԻ ԱԼՅԱՆՍ»՝ 5,01 ՏՈԿՈՍ  
ՀԵՆՁԵԼ ՄԿՈՅԱՆԸ՝ ՀԻՆԳԵՐՈՐԳ ԱՆԳԱՄ ԱՆԸՆԴՍԵՅ ԳՎՐՅԱՎ ԽՈՐՀՐԳՐԱՆԻ ԴԱՏԱՍՍՎՈՐ,  
«ՎՐԱՅԱՎԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ԸՆՏՐԱՅՈՒՅԱԿՈՎ ԴԱՏԱՍՍՎՈՐ ԳՎՐՅԱՆ ՆԱԵՎ  
ՌՈՒՍԼԱՆ ԴՈՂՈՍՅԱՆՆ (ԵՐԿՐՈՐԳ ԱՆԳԱՄ) ԵՎ ՍԱՍՎԵԼ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ**

Հոկտեմբերի 8-ին, Վրաստանում կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքում, երկրի օրենսդիր մարմնի համամասնական մանդատները բաշխվեցին երեք կուսակցությունների՝ «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան»՝ իշխող, «Միասնական ազգային շարժում»՝ ընդդիմադիր և «Հայրենասերների այլանա» կուսակցությունների միջև:

Նախնական տվյալներով, «Վրացական երազանքը» ստացել է ընտրողների ձայների 48,67 տոկոսը կամ 856 հազար 858 ձայն, «Միասնական ազգային շարժումը»՝ 27,11 տոկոսը կամ 478 հազար 416 ձայն, «Վրաստանի հայրենասերների այլանա»՝ 5,01 տոկոսը կամ 88 հազար 32 ձայն:



Ինչպես հայտարարեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի խոսնակ Աննա Միքելաձեն, հոկտեմբերի 8-ի խորհրդարանական ընտրությունները կայացան, դրանց մասնակցել է 1 814 276 ընտրող, որը կազմում է ընտրացուցակներում գրանցված ընտրողների ընդհանուր քանակի (3 513 884 ընտրող) 51,63 տոկոսը: Նրա խոսքով՝ ընտրողների 51,1 տոկոսը կանայք էին, իսկ 48,9 տոկոսը՝ տղամարդիկ:

Վրաստանի 73 ընտրատարածքներում բացվել էր 3703 ընտրական տեղամաս: Բացի այդ, աշխարհի 41 երկրներում կար 56 ընտրական տեղամաս: Ընդհանուր առմամբ, արտասահմանում գրանցվել էր 49716 ընտրող: Ընտրությունների ընթացքին հետևելու էր ընտրական սուբյեկտների 42092 ներկայացուցիչ, ինչպես նաև՝ տեղական դիտորդական 111 կազմակերպությունների 29931 և միջազգային 55 կազմակերպությունների 1440 դիտորդ: Ընտրական գործընթացը լուսաբանում էր 184 լրատվամիջոցների 5368 ներկայացուցիչ:

Վրաստանի խորհրդարանական ընտրությունների մասնակցեցին 19 քաղաքական կուսակցություն և վեց ընտրադաշինք: 73 միամանդատ ընտրատարածքներում, պատգամավորության 73 մանդատի համար, պայքարում էր 830 թեկնածու: Յուրաքանչյուր ընտրատարածքում գրանցված մեծամասնական թեկնածուների թիվը կազմում էր 6-16:

Ինչպես նշեց Աննա Միքելաձեն, ընտրությունների կապակցությամբ՝ 73 ընտրամարզերի ընտրական հանձնաժողովներում վավերացվել է 539 (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

**ԳԻՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԸՆՈՐՀԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ»**



Հոկտեմբերի 9-ի նախօրեին անցկացված խորհրդարանական ընտրությունների նախնական տվյալների հրապարակումից հետո, «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության նախագահ, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հրավիրեց հատուկ ճեպասուլիս:

«Ցանկանում եմ շնորհավորել բոլորին՝ 2016 թվականի հոկտեմբերի 8-ին խորհրդարանական ընտրությունների կայացման առիթով: Բոլորի գնահատմամբ, դրանք թափանցիկ, ազատ և ժողովրդավարական ընտրություններ էին: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել մեր (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

**ԱԶԱՐԻԱՆ ԿՈՒՆԵՆԱ ԶՈՐՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԳ**

Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 8-ին, Վրաստանի խորհրդարանական ընտրություններին զուգընթաց, անցկացվեցին նաև Աջարիայի Գերագույն խորհրդի ընտրությունները, որոնց մասնակցում էին 11 քաղաքական կուսակցություններ և չորս ընտրադաշինք:

Ընտրությունների արդյունքներով՝ համամասնական ընտրատարածքով 5 տոկոսի արգելազիծը հաղթահարեց 4 կուսակցություն և ընտրադաշինք: «Վրացական երազանքը» ստացավ ընտրողների 45 տոկոսի պաշտպանությունը, «Միասնական ազգային շարժումը»՝ 29,68, «Նինո Բուրջանաձե-ժողովրդավարական շարժումը»՝ 5,95, իսկ «Հայրենասերների այլանա»՝ 5,72 տոկոսի աջակցությունը: (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

**«ԹԲԻԼԻՍՈՒԲԱ 2016»**

**ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ 37-ՐԴ ԱՆԳԱՄ ՆՇՈՒՄ Ե ԻՐ ՏՈՆԸ**



Հոկտեմբերի 15-16-ին Վրաստանի մայրաքաղաքը 37-րդ անգամ նշում է իր ավանդական տոնը՝ «Թբիլիսոբան»:

Այս տարի էլ, ավանդույթի համաձայն, կանցկացվեն մի շարք միջոցառումներ: Մասնավորապես «Հին Թբիլիսի» թաղամասում կներկայացվեն այն մասնագիտությունները, որոնք ժամանակին բնորոշ էին Թբիլիսի կյանքին՝ կոշկակարություն, դարբնություն, վրացական գինու սիրահարները Հավաքարից Մեյդան տանող ճանապարհին կկարողանան համտեսել ու զնել վրացական տարբեր գինիներ, իսկ Ռիդեի հրապարակում կանցկացվի վրացական գյուղատնտեսական մթերքների տոնավաճառը...

Հոկտեմբերի 16-ին Իլիայի այգում տեղի կունենա «Պատվավոր թբիլիսցի» կոչման շնորհման հանդիսավոր արարողությունը:

Նշենք, որ «Թբիլիսոբայի» տոնին մասնակցում է նաև Երեւանի քաղաքապետարանի պատվիրակությունը, որի կազմում են քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Սերգեյ Մակարյանը, Երեւանի Աջափնյակի տարածքային միավորի ղեկավար Արտավազ Սարգսյանն և քաղաքապետարանի արձանագրային բաժնի ղեկավար Արկադի Նալբանդյանը:

**ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՕՐԱՎԱՐԳՈՒՄ ԵՐԿՐՈՐ ԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐԱՅՄԱՆ ՀԱՐՉԵՐՆ ԷՆ**



Հոկտեմբերի 12-ին, երկօրյա պաշտոնական այցով, Թբիլիսի ժամանեց Դրոզտանի նախագահ Ալմազբեկ Ատանբաեւը:

Օղանավակայանից Դրոզտանի ղեկավարն ուղեւորվեց Վրաստանի տարածքային ամբողջականության համար զոհվածների հուշահամալիր և ծաղկաբույս (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

**ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ՀՐԱԺԵՇՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հոկտեմբերի 10-ին, Հայաստանում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպան Գիորգի Սազանելիձեն և ռազմական կցորդ, գնդապետ Պաստա Դեւդարիանին, վերջինիս Հայաստանում դիվանագիտական առաքելության ավարտի կապակցությամբ, հանդիպում ունեցան Հայաստանի պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի հետ:

Հայաստանի պաշտպանության նախարարը շնորհակալություն հայտնեց ռազմական կցորդին՝ երկու պետությունների պաշտպանական գերատեսչությունների հարաբերությունների զարգացմանը նպաստելու համար և հաջողություն մաղթեց՝ հետագա գործունեության ընթացքում:

Հանդիպմանը կողմերը քննարկել են նաև վրաց-հայկական բազմակողմ համագործակցությանը վերաբերող, երկկողմ հետաքրքրություն ներկայացնող, ինչպես նաև տարածաշրջանային խնդիրներին ու միջազգային իրադարձություններին առնչվող հարցեր:





Ա38

# ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՐԿԿՈՂՄ ԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐԱՑՄԱՆ ԶԱՐՑԵՐՆ ԷՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կեպակով հարգանքի տուրք մատուցեց հերոսների հիշատակին:

Ղրղզստանի պաշտոնական դիմավորման արարողությունը տեղի ունեցավ Վրաստանի նախագահի Չավլաբարի նստավայրում, որից հետո կայացավ երկու երկրների նախագահների առանձնագրույցը: Առանձնագրույցի ավարտից հետո՝ բանակցությունները շարունակվեցին ընդլայնված կազմով:


Հանդիպմանը Վրաստանի նախա-

գահ Գիորգի Մարգվելաշվիլին վստահություն հայտնեց, որ, Ղրղզստանի ղեկավարի առաջին այցը Վրաստան, կնպաստի երկկողմ հարաբերությունների հետագա զարգացմանը:

Բանակցություններին կողմերը քննարկեցին երկկողմ քաղաքական հարաբերությունների խորացման հարցերը եւ նշեցին, որ բարձր մակարդակով ինտենսիվ երկխոսությունը պետք է տարվի անընդմեջ: Ինչպես հայտարարեց Վրաստանի նախագահը՝ անվտանգության, էկոնոմիկայի եւ կրթության ոլորտում Վրաս-

տանի եւ Ղրղզստանի միջեւ համաձայնագրի ստորագրումը նոր հնարավորություններ է ստեղծում՝ այդ ոլորտում ներդրում համագործակցության խորացման համար: Զրուցակիցները անդրադարձան նաեւ Վրաստանի բռնազավթված տարածքների եւ այնտեղ մարդու իրավունքների խախտման հարցերին:

Գիորգի Մարգվելաշվիլին Ալմադրեկ Ատանբաեւին շնորհակալություն հայտնեց՝ Վրաստանի ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության պաշտպանության համար:



ՄԱԿ

## ԱՆՏՈՆԻՈ ԳՈՒՏԵՐԵՇՆ՝ ՊՈՐՏՈՂԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԵՄԻ

ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան, հոկտեմբերի 13-ին, Ղրղզստանի ղրղզալիայի նախկին վարչապետ Անտոնիո Գուտերեշին 5 տարի ժամկետով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնում նշանակելու հարցը: ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի նիստում Անտոնիո Գուտերեշի թեկնածությունը միաձայն հավանության արժանացավ:



Անտոնիո Գուտերեշը կնշանակվի ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնում 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2021-ի դեկտեմբերի 31-ը:

Հիշեցնենք, որ ՄԱԿ-ի գործող գլխավոր քարտուղար Պան Գի Մունի լիազորությունները լրանում են ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ին:

Անտոնիո Գուտերեշը 1995-2002 թթ. զբաղեցրել է Ղրղզստանի վարչապետի, իսկ 2005 թվականի հունիսից մինչև 2015 թվականի դեկտեմբեր՝ ՄԱԿ-ի փոխստանականների հարցերով Գերագույն հանձնակատարի պաշտոնները:

Նշենք, որ Գուտերեշը 2013 թվականից Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ է: Խորհրդի կազմում նա ընդգրկված է մինչև 2018 թվականը:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

## ՊՈՒՏԻՆԸ ՓԱՐԻՋ ՉՍԵՎՆԵՑ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հոկտեմբերի 19-ին այցով չի մեկնի Փարիզ: Այդ մասին հայտնել է Կրեմլի աղբյուրը:

«Հոկտեմբերի 19-ին նախագահի այցը Փարիզ չի կայանա», - ասել է նա՝ մեկնաբանելով ՌԴ ղեկավարի՝ այդ ուղևորության հնարավորության վերաբերյալ ԶԼՄ-ներում հայտնված հաղորդագրությունները:

Ավելի վաղ ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը հայտարարել է, որ ռուսական կողմը նախապատրաստվում է Վլադիմիր Պուտինի Փարիզ այցին, որի ընթացքում, մասնավորապես, բանակցություններ են պլանավորված Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդի հետ:

Ավելի վաղ Օլանդը հարցականի տակ է դրել այդ բանակցությունների նպատակահարմարությունը:

ՄԱԿ

## ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ՓԱՆՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՎԸ ԱՃՈՒՄ Է

Տարեսկզբից Միգրերական ծովով Եվրոպա են ժամանել ավելի քան 316 հազար միգրանտներ ու փախստականներ: Այդ մասին հայտարարել է Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄԱԿ) մամուլի քարտուղար Ջոել Միլմանը:

ՄԱԿ-ի տվյալներով՝ այս տարի Եվրոպական ափեր է հասել 316 հազար 331 մարդ: Դրա հետ մեկտեղ՝ Միգրերական ծովը հատելու փորձ կատարելիս, զոհվել կան անհետ կորել է 3611 մարդ:

Միլմանը ընդգծել է, որ 2016 թվականի մարտի 10-ին Եվրամիության եւ Թուրքիայի միջեւ կնքված համաձայնագրի իրագործման սկսվելուց ի վեր, միգրանտների ու փախստականների թվաքանակը շուրջ մասստանում եւ արեւմտյան Բալկանների երկրներում ավելացել է 56 տոկոսով: Ընդամենը Հունաստան նոր ժամանածների թիվն ավելացել է 40 տոկոսով, այն դեպքում, երբ Բուլղարիայում աճը կազմել է 717 տոկոս՝ այսինքն, 863-ից մինչեւ 7070 մարդ մարտի 10-ից մինչեւ սեպտեմբերի 15-ը ընկած ժամանակաշրջանում:

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### ԱՆՑԿԱՑՎԵՑ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԶԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ

Հոկտեմբերի 13-ին, Վրաստանի Արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանու նախագահությամբ, անցկացվեց 2016 թվականի խորհրդարանական ընտրությունների համար ձեւավորված միջգերատեսչական հանձնաժողովի տասներորդ նիստը:

Նիստում Թեա Ծուլուկիանին երկրի բնակչությանը շնորհավորեց ժողովրդավարական եւ արդարացի խորհրդարանական ընտրությունների անցկացման կապակցությամբ եւ նշեց, որ, չնայած առանձին միջադեպերի, ընտրողներին տրվեց խաղաղ իրավիճակում ընտրություն կատարելու հնարավորություն:

Հանձնաժողովի անդամները լսեցին ԿԸՀ-ի հաշվետվությունը՝ խորհրդարանական ընտրությունների առաջին փուլի ընթացքի եւ դրա արդյունքների մասին: Միջգերատեսչական հանձնաժողովի անդամների առջեւ հաշվետվությամբ հանդես եկան նաեւ ուժային կառույցների ներկայացուցիչները, ովքեր տեղեկատվություն ներկայացրին ընտրությունների ընթացքում տեղի ունեցած իրավախախտումների հետաքննության ընթացքի մասին:

Արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին միջգերատեսչական հանձնաժողովի անդամներին, քաղաքական կուսակցություններին եւ դիտորդական առաքելությունների ներկայացուցիչներին հրավիրեց «Ընտրությունները Վրաստա-

նում» ցուցահանդեսի բացմանը:

Միջգերատեսչական հանձնաժողովի տասներորդ նիստին մասնակցեցին հանձնաժողովի անդամները՝ ներքին գործերի, արտաքին գործերի, ֆինանսների, պաշտպանության, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցյունների, պատիժների կատարման եւ պրոբացիայի, կրթության եւ գիտության, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության փոխնախարարները, ինչպես նաեւ՝ գլխավոր դատախազի եւ պետական անվտանգության ծառայության պետի տեղակալները, պետական աուդիտի ծառայության ներկայացուցիչները, Վրաստանի կառավարության աշխատակազմի տարածաշրջանների եւ տեղական ինքնակառավարման մարմինների հետ հարաբերությունների դեպարտամենտի պետը, ընտրական սուբյեկտների, քաղաքական կուսակցությունների եւ ընտրադաշինքների, տեղական եւ միջազգային դիտորդական կազմակերպությունների ներկայացուցիչները:



## ԿՐԹԱԿԱՆ



### ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԱՐԺԱՆՔՆԵՐԻ ԶԱՄԱՐ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ ՄԱՐԶԻՉՆԵՐ

Մանկավարժների եւ դպրոցների տնօրենների մասնագիտական զարգացման նախագծի շրջանակներում սկսվել է մարզիչների նախապատրաստումը:

«Սովորողների կողմնորոշված ուսումնական միջավայրը բնութագրող» ընդհանուր ունակությունների ընդհանուր մասնագիտական դասընթացի առաջին մոդուլով, նախապատրաստություն կանցնի 180 մարզիչ: Ուսուցման ընթացքում,

մարզիչները հանդես կգան աշակերտների դերում, որպեսզի առավել լավ ընկալեն մոդուլի էությունը, այն մանկավարժական մոտեցումները, մեթոդներն ու ակտիվները, որոնք ներդրված են վարժանք-մոդուլում:

Վարժանքները կսկսվեն 2016թ. աշնանը, եւ դրանք կառնչվեն ստույգ ու բնական գիտությունների բոլոր ուսուցիչներին, ինչպես նաեւ աշխարհագրության ու անգլերենի 7-12-րդ դասարանների ուսուցիչներին: Այդ գործընթացին կմասնակցեն շուրջ 20 հազար մանկավարժներ, որոնց թվում կլինեն նաեւ ոչ վրացալեզու դպրոցների ուսուցիչներ:

## ՊԱՐԳԵՎՆԵՐ՝ ԳԵՐԱԶԱՆՑ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Ալեքսանդր Ջեջելավան պարզեւատրեց մի շարք գերազանց աշակերտներին:

Մասնավորապես թբիլիսիի Իսանի-Սանգորիի եւ Վակե-Սաբուրթալոյի հանրային դպրոցների շուրջ 240 տասներորդ դասարանցիներ, որպես նվեր, ստացան անհատական համակարգիչներ:

Ընդհանուր առմամբ, թբիլիսիի մասշտաբով անհատական համակարգիչներ են ստացել 448 աշակերտներ (անց-

յալ տարի պարգևատրվել էր 356-ը), իսկ Վրաստանի մասշտաբով՝ պարգևատրված աշակերտների թիվը կազմել է 2470 (անցյալ տարի՝ 1970):

Նշենք, որ, տարիների ավանդույթ ունեցող, պարգևատրման նախագիծը հետապնդում է աշակերտների խրախուսման նպատակ եւ տարեցտարի պարգևատրվածների թիվն ավե-

լանում է:

2016 թվականին վերոնշյալ նախագիծը ընդլայնվեց եւ դրանում ներառվեցին բազային աստիճանի (7-րդ, 8-րդ եւ 9-րդ դասարաններ) աշակերտները, ովքեր առանց կլորացման տաս



միավորով եզրափակեցին ուսումնական տարին:

## ՎՐԱՍՏԱՆԻ ԳՊՐՈՋՆԵՐՈՒՄ ԿՆԵՐԴՐՎԵՆ ԱԶԱՏ ԴԱՍԱԺԱՄԵՐ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Ալեքսանդր Ջեջելավան հայտարարեց, որ երկրի հանրակրթական դպրոցներում ներդրվելու են ազատ դասաժամեր:

Նախարարի խոսքով, աշակերտը ինքն է որոշելու՝ հաճախել՝ այդ դասաժամերին, թե՞ ոչ: Այդ դասաժամերին տնային առաջադրանքներ չեն տրվի, գնահատականներ էլ չեն նշանակվի: Աշակերտը, նախարարի հավաստմամբ, կստանա կոնկրետ թեմայով խորացված տեղեկատվություն ստանալու հնարավորություն: Ինչ-

պես հայտարարեց Ալեքսանդր Ջեջելավան՝ դպրոցներում ազատ դասաժամերին ներդրումը կնպաստի աշակերտի վերլուծական, ստեղծագործական եւ նորարարական մտածելակերպին, թիմային աշխատանքին եւ ղեկավարի ունակությունների հղկմանը: «Այդ դասաժամերը չեն կորչի: Մենք հնարավորություն կտանք՝

ապահովելու դրանց պետական ֆինանսավորումը: Հիմնվում է հիմնադրամ, որը կհատկացնի դրամաշնորհներ: Սկզբում հիմնադրամը դրամաշնորհ կունենա 300 ազատ դասաժամի համար, այսինքն՝ առաջին դրամաշնորհները նախատեսված են առաջիկա երեք ամիսների համար: Մենք միանշանակ ազատ դասաժամերը կֆինանսավորենք շաբաթական երկու անգամ, երեք անսվա ընթացքում», - հայտարարեց կրթության նախարարը:



Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԲՅՈՒՋԵ-ՆԱԽԱԳԻԾ

ԱՌԱՋԻՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԿՐՃԱՏՎՈՒՄ Է



Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի կառավարությունը երկրի օրենսդիր մարմնի քննարկմանն է ներկայացրել 2017 թվականի պետական բյուջեի նախնական նախագիծը:

Համաձայն ներկայացված տարբերակի, առանձին պետական գերատեսչությունների ֆինանսավորումը կրճատվում է: Մասնավորապես, 2 միլիոնից մինչև 800 հազար լարի կրճատվում է անվտանգության խորհրդի ֆինանսավորումը: Պետական անվտանգության եւ ճգնաժամների կառավարման խորհրդի բյուջեն 5.2 միլիոնից նվազեցվում է մինչև 3.8 միլիոն: Կառավարության աշխատակազմի ֆինանսավորումը նվազեցվում է 3 միլիոնով եւ կկազմի 17 միլիոն լարի: Նախագծում ՆԳ նա-

խարարության բյուջեն սահմանվել է 585 միլիոն լարիի չափով: Կրճատվել են հետախուզության ծառայության ծախսերը: Գերատեսչության ֆինանսավորումը կկազմի 14 միլիոն լարի:

Նախորդ 70.5 միլիոնի դիմաց՝ Արդարադատության նախարարության բյուջեն 2017 թվականին կկազմի 65.6 միլիոն լարի: 153.8 միլիոն լարիից մինչև 146 միլիոն լարի կրճատվել է պատիժների կատարման նախարարության ֆինանսավորումը, իսկ ԱԳ նախարարությունը կստանա 105.6 միլիոն լարի: Մշակույթի նախարարության ֆինանսավորումը կրճատվել է 550 հազար լարիով եւ կազմում է 96.450 հազար լարի, իսկ էներգետիկայի նախարարությունը, իր տնօրինության տակ, կունենա 121 միլիոն լարի:

ՖԻՆԱՆՍԵՐ

ՆՈՂԱՐ ԽԱՂՈՒՐԻ. «ՄՈՏ ՀԵՌԱՆԿԱՐՈՒՄ ՄԵՆՔ ՄՊԱՍՈՒՄ ԵՆՔ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՄՐԱՑՈՒՄ»

Վրաստանի ֆինանսների նախարար Նողար Խաղուրի, արձագանքելով ընդդիմախոսների կողմից բազմիցս հայտարարած լարիի փոխանկման կուրսի անկման հնարավորության վերաբերյալ հայտարարություններին, հայտարարեց, որ ընդդիմախոսներին կոչ է անում պահպանել փոքրիշատե օբյեկտիվություն:

Նա նաեւ ընդդիմախոսներին խորհուրդ է տալիս, քաղաքական միավորներ ստանալու համար, չկատարել այնպիսի հայտարարություններ, որոնք հարցականի տակ կդնեն իրենց հեղինակությունը:

«Եթե դուք ծանոթանաք միջազգային ֆինանսական ինստիտուտների, այդ թվում՝ Արժուքային հիմնադրամի եզրակացություններին ու կանխագծումներին, ապա դրանք իրատեսական են, եւ ոչ մեկը կասկածի տակ չի առնում տարադրամի կայունությունը: Հաջորդ տարին կլինի շատ ավելի լավը: Այս տարի էլ

մենք սպասում ենք տնտեսական նշանակալի աճ՝ ավելի բարձր, քան նախօրոք կանխագծվել էր: Միաժամանակ, բոլորը միակարծիք են, որ վերջին տարիների ընթացքում բյուջետային ծախսերը չեն հանգեցրել եւ չեն էլ կարող հանգեցնել ազդեցությունների՝ տարադրամի փոխանակման կուրսի վրա: Հետեւաբար, ընդդիմախոսներին կոչ են անում պահպանել փոքրիշատե օբյեկտիվություն եւ, քաղաքական միավորների ստացման համար, չկատարել այնպիսի հայտարարություններ, որոնք կասկածի տակ կառնեն նրանց հեղինակությունը»,- հայ-



տարարեց ֆինանսների նախարարը:

Նրա խոսքով, լարիի կուրսի վերաբերյալ կոնկրետ կանխագծումներ չի կարող անել, թեպետ նշեց, որ մոտ հեռանկարում սպասում են փոխանակման կուրսի կայունացում եւ ամրացում:

ՉՈՐՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԵՏՐՅՈՒՋԵԻՑ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՆԱՆ 300 ՀԱՋԱՐ ԼԱՐԻ

Չորս քաղաքական կուսակցություններ՝ «Ազատ ժողովրդավարները», «Լեյբորիստական կուսակցությունը», «Ժողովրդավարական շարժում-Միասնական Վրաստանի համար» եւ «Պատառ Բուրճուլաձեի» կուսակցությունը, տարեկան պետբյուջեից կֆինանսավորվեն 300 հազար լարիի չափով:

Վրացական օրենսդրության համաձայն, այն կուսակցությունները, որոնք ընտրություններում հաղթահարել են 3 տոկոսի արգելազիծը, նախագահական ընտրություններում եւ տեղական ինքնակառավարման ընտրություններում կստանան գովազդման անվճար ժամանակ եւ կկարողանան իրենց թեկնածուներին առաջադրել Կենտրոնական ընտրական հանձնա-

ժողովում: Իսկ կուսակցությունները, որոնք իրենց կազմում պահպանել են գեներալային հավասարակշռությունը, լրացուցիչ կստանան 90 հազար լարի:

Նշենք, որ խորհրդարանական ընտրություններում 3 տոկոսի արգելազիծը կուսակցությունները հաղթահարեցին, սակայն օրենսդրական մարմնում մանդատներ չկարողացան ստանալ:

ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ MOUNT WHITNEY ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ՆԱՎԸ ԲԱԹՈՒՄԻՈՒՄ



Յոկոտեմբերի 12-ի առավոտյան, Վրաստանի Բաթումիի նավահանգիստ է ժամանել ԱՄՆ-ի 6-րդ նավատորմի Mount Whitney հրամանատարական նավը:

Վրաստանում ԱՄՆ-ի դեսպանության տեղակալը համաձայն, սա այդ նավի արդեն չորրորդ այցն է, որն իրականացվում է կանոնավոր հաղորդակցության շրջանակներում: Mount Whitney-ը Բաթումիում կմնա մինչև հոկտեմբերի 15-ը: Ներկայիս այցի ընթացքում՝ հանդիպումներ եւ երկկողմ վարժանքներ կանցկացվեն ամերիկացի դաշնակիցների եւ ծովային գոր-

ծընկերների մասնակցությամբ: Ինչպես նշվում է՝ ամերիկյան նավի գործողությունների նպատակը ծովային անվտանգության ամրապնդումն է, ԱՄՆ-ի տարածաշրջանային գործընկերների կայունության ապահովումը եւ նրանց պատրաստվածության մակարդակի բարձրացումը:

ՔՐԵՆԱԿԱՆ

ԹԱՐԿԱՄԱՋԵԻ ՄԵՔԵՆԱՅԻ ՊԱՅԹԵՅՄԱՆ ՄԵՋ ԿԱՍԿԱԾՅԱԼԸ ԳՏԵՎՈՒՄ Է ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 4-ին, Թբիլիսիի կենտրոնում, պայթեցվեց Միասնական ազգային շարժման լիդերներից մեկի՝ Գվիկ Թարգամաձեի ավտոմեքենան:

Արդյունքում, վիրավորվեց 5 մարդ: Տեղի ունեցածի առթիվ՝ հարուցվել էր քրեական գործ:

Ինչպես տեղեկացրել է «Ռուսթավի-2» հեռուստաընկերությունը, հոկտեմբերի 8-ին, Թբիլիսիի առանձին շրջաններում անցկացվեց հա-


տուկ գործողություն: Հեռուստաընկերության հավաստմամբ, ուժայինները փնտրում էին վերոնշյալ պայթյունի կազմակերպման մեջ մեղադրվող Դավիթ Խեչուաշվիլուն:

Ինչպես հայտարարեց կասկածյալի հայրը՝ Անգոր Խեչուաշվիլին, իր որդուն ժամա-

նակին կասկածում էին Վրաստանի նախկին նախագահ Էդուարդ Շեւարճաձեի դեմ մահափորձում մասնակցության մեջ, սակայն կասկածը չապացուցվեց, որից հետո Դավիթ Խեչուաշվիլին աշխատել է երկրի ուժային կառույցներում: Անգոր Խեչուաշվիլու խոսքով, որդին մասնակցել է նաեւ Միլիտերի Սակաշվիլու նախագահության օրոք տեղի ունեցած «Մուխ-



րովանիի» միջադեպին: Նրա խոսքով, որդին հինգ օր առաջ մեկնել է Ռուսաստան, այնպես որ, սեպտեմբերի 4-ի պայթյունի հետ կապ չունի:



ՎՐԱՍԱՆԸ ՆԵՑ ՄՅԻՆԹՈՐԱՍՎԵՏԻՑԻՈՎԼՈՒԲԱ ՏՈՆԸ

Յոկոտեմբերի 14-ին, Վրաստանը նշեց Սցիտեթրա-Սվետիցխոլոբա եկեղեցական, ավանդական տոնը:

Տոնի առթիվ՝ Վրաստանի հինավուրց մայրաքաղաք Սցիտեթայում՝ Սվետիցխոլովելի տաճարում, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը մատուցեց տոնական պատարագ: Միջոցառմանը ներկա էին Վրաստանի օրենսդիր եւ գործադիր մարմինների բարձրաստիճան ներկայացուցիչներ, դիվանագիտական կորպուսի, հասարակական կազմակերպությունների եւ հանրության ներկայացուցիչներ:

Տոնի առթիվ անցկացվեցին մի շարք ավանդական միջոցառումներ, մասնավորապես, կազմակերպվեցին ցուցահանդեսներ, մարզական խաղեր, թատերական ներկայացումներ:

Տոնն ավարտվեց տոնական գալահամերգով:

Նշենք, որ Վրաստանում Սվետիցխոլոբա տոնը նշվում է երկու անգամ՝ հոկտեմբերի 14-ին՝ որպես պետական տոն, եւ՝ հունիսի 13-ին:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԻՍԱՆ ԿԱՆՑԿԱՑՎԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ

Յոկոտեմբերի 20-ին կանցկացվի Սահմանադրական դատարանի նիստը, որը կքննարկի Սահմանադրական դատարանի նախագահի ընտրության հարցը:

Ինչպես հայտարարեց դատարանի գլխավոր խորհրդական Գիորգի Լոնթաձեն, Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնի համար առաջադրվել են Իրինա Իմերլիշվիլու եւ Ջազա Թավաձեի թեկնածուները:

Խորհրդականը չճշտեց, թե ում կողմից է առաջադրվել Ջազա Թավաձեի թեկնածությունը, թեպետ նշեց, որ Իրինա Իմերլիշվիլու թեկնածությունը առաջադրվել է դատավորներ Գիորգի Կվերենցիխիլաձեի ու Մայա Կոպալեիշվիլու կողմից:

ԴԱՎԻԹ ԲԱՔՐԱՋԵՆ՝ ԱՄՆ-ՈՒՄ ՎՐԱՍԱՆԻ ԴԵՄՊԱՆ

Յոկոտեմբերի 12-ին, Վրաստանի նախագահը ստորագրեց կարգադրություն՝ ԱՄՆ-ում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանի պաշտոնում Դավիթ Բաքրաձեի նշանակման մասին: Դավիթ Բաքրաձեն մինչ այդ զբաղեցնում էր Եվրոպական եւ Եվրատլանտյան հնտեզման հարցերով պետնախարարի պաշտոնը:

Վրաստանի նախագահը, նորանշանակ դեսպանի հետ հանդիպմանը, քննարկեց՝ ռազմավարական գործընկեր ԱՄՆ-ի հետ Վրաստանի հարաբերությունների եւ համագործակցության հեռանկարների հարցը:

Նշենք, որ ԱՄՆ-ում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանն էր Արչիլ Գեգեշիձեն, որը վերջերս հանդես եկավ մի շարք հայտարարություններով, որոնցում օգտագործել էր ռուսական քարոզչական դրոշմակերպերը: Դրանից հետո նրան ետ վերադարձրեցին Թբիլիսի, սակայն որոշում էր ընդունվել մինչև ընտրությունները նրան թողնել այդ պաշտոնում:



ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՅԱՑԱՆ.

«ՎՐԱՅԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ»` 48,67 ՏՈԿՈՍ, «ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ»` 27,11 ՏՈԿՈՍ, «ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԻ ԱՆՅԱՆՍ»` 5,01 ՏՈԿՈՍ

(Սկիզբը` 1-ին էջում)

բողոք, տարածաշրջանային ընտրական հանձնաժողովների կողմից անվավեր է ճանաչվել երկու տեղամասի հանրագումարային արձանագրություն:

«Ներկա փուլում ընթացքի մեջ է տվյալների վերստուգման եւ ճշգրտման գործընթացը: Հիշեցնեն, որ համասնական ընտրությունների արդյունքների վերջնական հանրագումարումը ավարտվելու է հոկտեմբերի 27-ից ոչ ուշ»,- հայտարարեց Աննա Միքելաձեն:

Համասնական ընտրակարգով «Վրացական երազանքի» ընտրացուցակով պատգամավորի մանդատը երկրորդ անգամ ստացավ Ռուսլան Պողոսյանը: Նույն

ընտրացուցակով պատգամավոր դարձավ նաեւ Կախալաքցի գործարար Սամվել Մանուկյանը:

Նշենք, որ մեծամասնական ընտրակարգով առաջին փուլի արդյունքներով պատգամավորական մանդատ ստացան Հենգել Մկրտչյանը (5-րդ անգամ անընդմեջ դարձավ պատգամավոր) Ախալքալաքի-Նինոծմինդա), Գիրգի Միշվելիանին (Բուլնիսի), Ռուսլան Գաջիելը (Մառնեուլի), Կախա Օքրիաշվիլին (4-րդ անգամ անընդմեջ) (Ծալկա-Դմանիսի), Գեղեան Փոփխաձեն (2-րդ անգամ) (Բորժոմի-Ասպինձա- Ախալքալաքիի շրջանի 17 գյուղեր):

Ինչ վերաբերում է ընտրությունների երկրորդ փուլին, ապա, գործող օրենսդրության համաձայն, դրա անցկացման վերջին ժամկետը ընթացիկ տարվա նոյեմբերի 2-ն է: Վրաս-

տանի ընտրական օրենսգրքի համաձայն, ընտրությունների երկրորդ փուլն անցկացվում է այն դեպքում, երբ թեկնածուներից ոչ մեկին չի հաջողվում հաղթահարել 50 տոկոսի արգելագիծը: Երկրորդ փուլին մասնակցում են առաջին փուլում լավագույն արդյունքների հասած երկու թեկնածուները: Եթե երկրորդ փուլում թեկնածուները հավաքում են միեւնույն թվով ձայներ, ապա հաղթող է ճանաչվում նա, ով առաջին փուլում արժանացել էր ավելի շատ քվեների: ԿԸՀ-ի տվյալներով` ընտրությունների երկրորդ փուլը կանցկացվի մեծամասնական 50 ընտրատարածքներում: Այդ ընտրատարածքների թվում է Մառնեուլիի թիվ 36 ընտրատարածքը, որտեղ երկրորդ փուլը կվիճարկեն «Վրացական երազանքի» եւ «Ազգային շարժման» թեկնածուները:

ԳԻՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԸՆՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ` ԲԱՐՁՐԱՅԻՆ ԲԱՐՁՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ»

(Սկիզբը` 1-ին էջում)

վերահսկողության եւ ակտիվ ներգրավման համար»,- հայտարարեց Կվիրիկաշվիլին:

Նրա խոսքերով` դիտորդական միջազգային կազմակերպություններն արդեն շնորհավորել են Վրաստանին` անցկացված հաջող ընտրությունների համար, իսկ դա նշանակում է, որ ապահովվել է ժողովրդավարական նախընտրական իրավիճակ եւ անցկացվել են ազատ, արդարացի ընտրություններ:

Գիրգի Կվիրիկաշվիլին շնորհակալություն հայտնեց նաեւ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին եւ ընտրական վարչակազմին: Նրա խոսքով, նրանց ան-

կողմնակալ աշխատանքը ապահովեց ընտրությունների բարձր չափորոշիչը:

«Ճիշտ է` առայժմ ԿԸՀ-ն չի հրապարակել վերջնական արդյունքները, բայց, նախնական բոլոր տվյալներով, «Վրացական երազանքի» առավելությունը շատ մեծ է: Դա հսկայական աջակցություն է, ինչը նշանակում է, որ ընտրողների մեծամասնությունը հենց մեզ է վստահում երկրի կառավարումն առաջիկա չորս տարվա ընթացքում: Դա մեզ շատ է ուրախացնում, դրա հետ միասին դա հսկայական պատասխանատվություն է, որին մեր թիմը կպատասխանի տասնպատկված աշխատանքով»,- հայտարարեց Գիրգի Կվիրիկաշվիլին:

ԱԶԱՐԻԱՆ ԿՈՒՆԵՆԱ ԶՈՐԱ ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

(Սկիզբը` 1-ին էջում)

Ինչ վերաբերում է Գերագույն խորհրդի մեծամասնական ընտրություններին, ապա ինքնավար հանրապետության բոլոր վեց ընտրատարածքներում ծագեց երկրորդ փուլի ընտրությունների անցկացման անհրաժեշտություն, քանի որ առաջադրված թեկնածուներից ոչ մեկը չկարողացավ հաղթահարել 50 տոկոսի արգելագիծը: Ազարիայի ընտրատարածքներում մեծամասնական մանդատները երկրորդ փուլում կվիճարկեն «Վրացական երազանքի» եւ «Միասնական ազգային շարժման» թեկնածուները:

Նշենք, որ Ազարիայի Գերագույն խորհր-

դում ընդամենը 21 մանդատ է, որից 15-ը բաշխվում է համամասնական, իսկ 6-ը` մեծամասնական ընտրակարգով: Նախնական տվյալներով, Ազարիայի Գերագույն խորհրդում` համամասնական ընտրակարգով, «Վրացական երազանքը» կունենա 8 պատգամավոր, «Միասնական ազգային շարժումը» 5, «Նինո Բուրջանաձե-ժողովրդավարական շարժումը» եւ «Հայրենասերների ալյանսը»` 1-ական պատգամավոր:



«ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ» ԿՄՏՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ ԵՎ ԿՄԱՍՆԱԿՑԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻՆ



Կրաստանի «Միասնական ազգային շարժում» ընդդիմադիր կուսակցությունը, որի հիմնադիրը նախկին նախագահ Միխեիլ Սասակաշվիլին է, որոշեց չբոյկոտել խորհրդարանական ընտրությունների երկրորդ փուլը եւ մասնակցել դրան:

Այդ մասին հայտարարեց կուսակցության ղեկավար, Վրաստանի խորհրդարանի նախկին խոսնակ Դավիթ Բաբրաձեն: «Մեր կուսակցությունը մնացել է միակ արեւմտամետ ուժը: Մենք «Վրացական երազանքի» ռեժիմին թույլ չենք տա միակուսակցական կառավարում հաստատել երկրում: Հենց դրա համար էլ մենք որոշում ընդունեցինք, որ, չնայած ընտրությունների կեղծմանը, կուսակցությունը կմտնի խորհրդարան (համամասնական ցուցակներով) եւ կմասնակցի ընտրությունների երկրորդ փուլին»,- հայտարարեց Դավիթ Բաբրաձեն:

Նրա խոսքով` չնայած այդ հարցում թիմի ներսում առկա տարածաշրջանային, այդ որոշումն ընդունվել է կուսակցության քաղխորհրդի ձայների մեծամասնությամբ:

Խորհրդարան մուտք գործելու օգտին քվեարկել է քաղխորհրդի 60 անդամներից 37-ը, դեմ` 8-ը, ձեռնպահ է մնացել` 7-ը: Նիստին բացակայում էր 11-ը, այդ թվում` Ախալքալաքիից 8-րդ գումարման խորհրդարանի պատգամավոր Սամվել Պետրոսյանը:

ՆԻՆՈ ԲՈՒՐՋԱՆԱԶԵՆ ԶԱՄԱԶԱՅՆ ԶԷ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄՏՔԻ ԴԵՏ



«Ժողովրդավարական շարժման» լիդեր Նինո Բուրջանաձեի հայտարարությամբ` ընտրություններում զոհվում էր «քողարկված ձեռքը», եւ դա Բիժինա Իվանիշվիլու ձեռքն էր: Նրա խոսքով, ինքը մտադիր չէ հաշտվել պարտության հետ, քանի որ «Նինո Բուրջանաձե-ժողովրդավարական շարժումը» արգելագիծի հիմնախնդիր չունի, եւ այդ փաստը կարճ ժամանակում կհաստատվի: «Մենք մտադիր չենք հաշտվել անարդարության հետ, հաշտվել ձեռնածության հետ: Այն, որ օտարերկրյա դիտորդներն առաջին իսկ եզրակացություններում նշում էին, թե ընտրություններն անենեւին էլ իդեալական չեն, դա մեծ նշանակություն ունի: Ինչ վերաբերում է ընտրությունների կազմակերպմանն ու փոքրիշատե խաղաղ ընթացքին, ապա խորհրդարանի նախագահի հայտարարությունը, որ ընտրություններում նկատվում է ինչ-որ մեկի «քողարկված ձեռքը», լրիվությամբ համապատասխանում է իրականությանը: Դա Բիժինա Իվանիշվիլու ձեռքն էր: Իրականում այս ընտրություններում ձեռնածություն արվեց»,- հայտարարեց Նինո Բուրջանաձեն:

Նշենք, որ, խորհրդարանի նախկին նախագահ Նինո Բուրջանաձեի գլխավորած ղախվորած ղախիցը, ընտրություններում ստացավ ընտրողների 3,53 տոկոսի աջակցությունը:


ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ԵՐԿՈՒ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԱՆՎԱԿԵՐ ԴԱՆԱԶՎԵՑԻՆ

Մառնեուլիի թիվ 22 ընտրատարածքի մարզային հանձնաժողովը ընդունեց Դիզիաշվիլիի թիվ 48 ընտրատարածքի արդյունքների անվավեր ճանաչման որոշում: Նշենք, որ այդ տեղամասի արդյունքների անվավեր ճանաչման պահանջը ներկայացվեց «Բազմազգ Վրաստան» ոչ կառավարական կազմակերպության հայտով: Ինչպես նշված է հայտում, այդ տեղամասում տեղի ունեցած միջադեպի ժամանակ, ընտրական գործընթացը մինչեւ ժամը 20.00-ն ընդհատվեց, եւ ընտրողներին չտրվեց` իրենց կամքը արտահայտելու հնարավորություն:

Մարզային հանձնաժողովը անվավեր ճանաչեց նաեւ Կապանախչիի թիվ 34 ընտրատեղամասի համամասնական ընտրակարգի արդյունքները: Ինչպես հայտարարեց Մառնեուլիի մարզային ընտրական հանձնաժողովի նախագահ Իսկոբ Լսանիձեն, թիվ 34 տեղամասի համամասնական ընտրակարգի հանրագումարային արձանագրությունը անհայտացավ, եւ հանձնաժողովը ստիպված էր ներկայացնել միայն պատճենը: Այդ տեղամասում համամասնական ընտրակարգի արդյունքների անվավեր ճանաչման հայտը ներկայացրել էր «Արդարացի ընտրություններ» ոչ կառավարական կազմակերպությունը:

Ինչպես նշեց մարզային ընտրահանձնաժողովի նախագահը, առանձին տեղամասերում նկատվել է հանձնաժողովի անդամների կողմից նորմերի խախտում, իսկ տեղամասերից մեկի ընտրական հանձնաժողովի նախագահի աշխատավարձի տասնօրյա բաժինն առգրավվել է:

ԻՐԱՎԻ ԵՐԵՎԻՇՎԻԼԻՆ` ԱՆՍԱՅԻՆԵՐ ԲԱՐՁՐԱՊԵՏ



Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալներով, Ախալցխիսեի քաղաքապետի ընտրություններում հաղթել է «Միասնական ազգային շարժման» թեկնածու Իրակլի Երեկիշվիլին: ԿԸՀ-ի տվյալներով, Իրակլի Երեկիշվիլու թեկնածությունը պաշտպանել է ընտրողների 45,98 տոկոսը:

«Վրացական երազանքի» թեկնածու Վլադիմիր Չեղոճենիձեն արժանացել է ընտրողների 36,99 տոկոսի պաշտպանությանը, 7,44 տոկոսը քվեարկել է «Պետությունը ժողովրդի համար»-ի թեկնածու Իվանե Գվարամաձեի օգտին: Ազգային ֆորումի ներկայացուցիչ Ջուլիան Ինասարիձեն արժանացավ ընտրողների 6,88 տոկոսի, իսկ «Հայրենասերների ալյանսի» թեկնածու Բեսիկ Տաբատաձեն` 2,72 տոկոսի աջակցությանը:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԱՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՑ ԷՆ ԵՎ ԱՆՅՎԱՅՎԵՑԻՆ ԱԶԱՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Թբիլիսիում ԱՄՆ դեսպանությունը հոկտեմբերի 8-ին անցկացված խորհրդարանական ընտրությունների կապակցությամբ հայտարարեց, որ դրանք լավ կազմակերպված էին եւ անցկացվեցին ազատության պահպանմամբ:

Դեսպանությունը Վրաստանին շնորհավորում է մրցակցային եւ լավ կազմակերպված ընտրությունների անցկացման համար, միաժամանակ նշում, որ օրվա ընթացքում լարվածությունը աճեց եւ առանձին ընտրական տեղամասերում տեղի ունեցան բռնության միջադեպեր: «Բոլոր կուսակցություններին եւ նրանց կողմնացիցներին կոչ ենք անում հանգիստ եւ խաղաղ վերաբերվել երկրորդ փուլի ընտրություններին եւ ընտրությունների հետ կապված բոլոր հարցերը կարգավորել Վրաստանի օրենսդրության համաձայն,- նշված է ԱՄՆ դեսպանության հայտարարության մեջ:

«ԸՆՏՐԱՎՈՐՈՒՄ ԵՄ` ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԶՈՂ ԱՆՅՎԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ»

Կենտրոնական Ասիայում եւ Հարավային Կովկասում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ապատուրայը Վրաստանին շնորհավորեց` ընտրությունների հաջող անցկացման համար: «Քվեարկության գործընթացն անցկացվեց մարդու իրավունքների նկատմամբ հարգանքով: Ցավում եմ, որ նախընտրական փուլում տեղի ունեցան առանձին միջադեպեր: Վստահ եմ, որ վավերացված բոլոր խախտումները լրիվությամբ կգնահատվեն Վրաստանի իրավասու մարմինների կողմից»,- ասված է Ջեյմս Ապատուրայի հայտարարության մեջ: